

Գլուխը ետ դարձուց Յովնան եւ տեսաւ, որ քանի մը խուրթեցի տղայք ելեր կը նայէին, ուստի իրենց հրամայեց, եւ նոքա շուտ մը բերդին ամենէն լաւ սենեակներուն մէկը խոտի դեզեր բերին եւ փռեցին, իրենց գարի հացէն եւ չոր պանիրէն նոյնպէս բերին, սափորով մ'ել ջուր դրին, որ փախստականք հանգչին ու կազդուրին:

Երբ այս սասնական հիւրընկալութիւնը վայելեցին մեր ազնուատոհմք, նոսրով Յովնանու հետ առանձնացաւ եւ հարցուց թէ ի՞նչ էր միտքը, մինչեւ ե՞րբ այդ աւերակ բերդին մէջ կենալ էր, իսկ Յովնան յայտնեց թէ իրեն այդ երկրին մէջ երկայն կենալ անկարելի էր, մանաւանդ երբ բուն երկրին բնակիչք ոչ յոյս, ոչ կարողութիւն եւ ոչ գլուխ ունէին դիմադրելու, եւ Ժիրակ Ոստանի բերդին առջեւ երկայն չէր կրնար կենալ եւ անտարակոյս խուրթեցի գունդին ետեւէն սլիտի արշաւեր, վրէժխնդիր լինելու այն չարեաց, որ հասուցեր էին իւր զօրաց, ուստի իրեն պարտք էր դառնալ Սասուն եւ մտածել թէ ի՞նչ պէտք էր ընել:

— Ինչպի՞սի են քու զօրքերդ,— հարցուց խոսրով:

— Գրեթէ հարիւր հոգի:

— Ուրեմն մեր նաւերը զձեզ կրնան առնուլ եւ տանիլ ուր որ կ'ուզէք:

— Լաւ՛, ուրեմն այս գիշեր ճամփայ կ'ելնենք, եւ երբ քամին յաջող է կը հասնինք Դատուան: Եթէ դուք յանձն կառնուք մեզի հիւր լինիլ Սասուն մինչեւ որ այս պատուհասը անցնի՝ մենք շատ գոհ կը լինինք:

— Արդէն մենք տարագիր փախստական մարդիկ ենք, ապահովութիւն ո՛ւր որ գտնենք հոն կը դիմենք:

Նաւավարներն բերել տուին եւ հարցրին. նոքա ապահովեցին թէ կես-գիշերուն հանդարտ քամի մը որ կ'ելներ սովորաբար՝ զիրենք առաւօտուն կանուխ Դատուան կրնար հանել: Նոյնպէս նաւավարներու ըսած խաղաղութեամբ եւ հանգիստ Դատուան հասան Յովնան ու խոսրով եւ նոցայ ընկերքը. կանանց համար